Ամփոփ նյութ

«ԻԴՐԱՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ԻԴՐԱՄ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ թույլ տալու համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՈՐՈՇՈՒՄ
11.03.2022թ. ԹԻՎ 1/07 ԾՕՀ-Ա

«ԻԴՐԱՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սույն որոշման նկարագրական մասում նշված խախտումները թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել **նախազգուշացում**՝ նման խախտումները հետագայում բացառելու, ինչպես նաև հետևյալ միջոցառումն իրականացնելու հանձնարարականով.

- սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 5 օրյա ժամկետում ներկայացնել Կենտրոնական բանկի խորհրդի 269-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 17/02-ի 49.1-րդ կետով սահմանված պահանջը պատշաճ ապահովելու ուղղությամբ միջոցառումների ծրագիր՝ դրանում առնվազն ներառելով գործընթացի ապահովման համար պատասխանատու աշխատակիցների ընդգրկման և նախատեսվող այլ հսկողական մեխանիզմների սահմանման, ինչպես նաև շահառուների հետ վերջնահաշվարկի և ինկասացիայի իրականացման (այդ թվում՝ դրանց իրականացման ժամկետների նախատեսման և պահպանման) վերաբերյալ միջոցառումներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**